ՄԱՆԿԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
АРМЯНСКАЯ АССОЦИАЦИЯ ДЕТСКИХ ВРАЧЕЙ
ARMENIAN PEDIATRIC ASSOCIATION

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2025

«Մանկական բժիշկների հայկական ասոցիացիա» (ՄԲՀԱ) ՀԿ–ն ստեղծվել է 2007թ.՝ միավորելով երեխաների առողջության ոլորտում աշխատող տարբեր մասնագետներին: Ասոցիացիայի խորհրդում ներկայացված են առաջատար մանկաբույժներ, մանկական վիրաբույժներ և նեղ մասնագետներ, երեխաների և դեռահասների ոլորտում գործող առողջապահության կազմակերպիչներ, բժշկական համալսարանի դասախոսներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ասոցիացիայի գործունեությունն ուղղված է Հայաստանում երեխաների և դեռահասների առողջության և զարգացման հիմնախնդիրների լուծմանը հետևյալ ուղղություններով.

- **աջակցություն որակյալ բուժօգնության կազմակերպմանը և տրամադրմանը,**
- **աջակցություն ուղեցույցների և այլ օժանդակ նյութերի մշակմանը,**
- **բուժանձնակազմի շարունակական բժշկական կրթություն,**
- **աջակցություն երեխաների և դեռահասների առողջության ոլորտին առնչվող ազգային քաղաքականության մշակմանը, շահերի պաշտպանություն**
- **մանկաբուժական ոլորտում գիտական հետազոտությունների, վերլուծական աշխատանքերի, դիտարկումների խրախուսում,**
- **միջազգային համագործակցության իրականացում:**

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ (առ հունվար, 2025թ.)

✓ Մանկաբուժական ազգային կոնֆերանսներ (միջազգային մասնակցությամբ)

Խոշոր մանկաբուժական գիտաժողովներ՝ միջազգային մասնակցությամբ իրականացվել են 2008, 2010, 2012, 2014, 2016, 2018, 2021, այնուհետ՝ տարեկան: Կոնֆերանսներին մշտական աջակցություն են ցուցաբերել ՀՀ Առողջապահության նախարարությունը, Երևանի Մ.Հերացու անվան Պետական բժշկական համալսարանը, Ցյուրիխի համալսարանական մանկական հիվանդանոցը և այլ գործընկերներ: Յուրաքանչյուր կոնֆերանսին մասնկացել է 300-400 մանկաբույժ, ընտանեկան բժիշկ, նեոնատոլոգ, մանկական վիրաբույժ և նեղ մասնագետներ Հայաստանի բոլոր մարզերից, Արցախից: Կոնֆերանսի բանախոսների շարքում են Հայաստանի և արտերկրյա առաջատար մասնագետներ (Շվեյցարիայից, Ավստրիայից, ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Դանիայից, Ֆինլանդիայից, Գերմանիայից, Ռուսաստանից, Վրաստանից և այլ երկրներից): Մասնակիցներին տրամադրվում են ՇՄԶ կրեդիտներ:

2021-ից ի վեր Մանկաբուժական կոնֆերանսները անցկացվում են ամեն տարի, Հայկական ակնաբուժության նախագծի և Լոս Անջելեսի մանկական հիվանդանոցի (ԼԱՄՀ) հետ համագործակցությամբ (առկա և առցանց եղանակով), ԱՄՆ առաջատար մանկական մասնագետների մասնակցությամբ:



2024թ.-ի սեպտեմբերի 19-20-ին անցկացված կոնֆերանսին մասնակցեցին ավելի քան 350 մանկական և ընտանեկան բժիշկներ, մանկական նեղ մասնագետներ Երևանից և ՀՀ տարբեր մարզերից: ԱՄՆ-ի պրոֆեսորները և Հայաստանի առաջատար բժիշկները զեկուցումներ ներկայացրեցին արդիական մանկաբուժական թեմաներով, քննարկվեցին ուշագրավ կլինիկական դեպքեր: Կոնֆերանսի 2-րդ օրը ծավալվեց

պանելային քննարկում. «Երեխայի զարգացում, զարգացման գնահատման և շարունակական վարման խնդիրները մանկաբույժի պրակտիկայում» թեմայով:

✓ **«Մանկաբուժական դպրոց»**

Մանկաբուժական դպրոցն անցկացվում է տարեկան կտրվածքով, 2008թ.–ից ի վեր: Ավադույթ դարձած այս կրթական միջոցառմանը մասնակցում են հարյուրավոր մանկական և ընտանեկան բժիշկներ Երևանից և ՀՀ մարզերից՝ հնարավորություն ստանալով ունկնդրելու մանկաբուժության առավել արդիական հարցերին նվիրված դասախոսություններ, որոնք ներկայացվում են Հայաստանի և արտերկրից հրավիրված առաջատար մանկական մասնագետների կողմից:

2024թ.-ի մայիսի 31-ին և հունիսի 1-ին անցկացված մանկաբուժական դպրոցին դասախոսությամբ հանդես եկավ ճանաչված պրոֆեսոր-գաստրոէնտերոլոգ Ցյուրիխի համալսարանական մանկական հիվանդանոցից: Դասընթացին մասնակցեցին ավելի քան 180 մանկական և ընտանեկան բժիշկներ ՀՀ բոլոր մարզերից:

Համագործակցելով «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ-ի և առաջատար մանկական այլ բուժհաստատությունների հետ՝ ասոցիացիան ամեն տարի իրականացնում է տարբեր ուսուցողական միջոցառումներ, որոնք հավաստագրվում են ՀՀ ԱՆ կողմից:

2024թ.-ի մարտի 14-ին 2024թ.-ի մարտի 14-ին «Արաբկիր» բժշկական համալիրի, Հայ երիկամաբանների, հեմոդիալիզի բժիշկների և տրանսպլանտոլոգների ասոցիացիայի հետ համատեղ, Նեֆրոլոգների միջազգային միության աջակցությամբ, անցկացվեց «Երիկամի համաշխարհային օր» սիմպոզիումը: Միջոցառմանը մասնակցեցին շուրջ 100 բժիշկ-մասնագետ:

2024թ.-ի նոյեմբերի 2-ին Վրաստանի ռեսպիրատոր ասոցիացիայի հետ համագործակցությամբ ք. Դիլիջանում անցկացվեց «Կլինիկական պրակտիկայի նորություններ» հայ-վրացական կոնֆերանսը: Դասախոսների շարքում էին Երևանի և Թբիլիսիի առաջատար կլինիկաների դասախոսները: Վրացական կողմից կոնֆերանսին մասնակցեցին 50-ից ավել բժիշկներ Սամցխե-Ջավախեթի շրջանից և Թբիլիսիից, ՀՀ-ից՝ 39 բժիշկ Տավուշի, Լոռվա, Գեղարքունիքի մարզերից և Երևանից: Քննարկվեցին նաև հետագա համագործակցության, համատեղ միջոցառումների և հետազոտությունների անցկացման հնարավորությունները:

✓ Ուղեցույցների, այլ մեթոդական նյութերի մշակում

Անցած տարիների ընթացքում մշակվել և հաստավել են երեխաների միզուղիների ինֆեկցիաների վարման, մուկովիսցիդոզի ախտորոշման ուղեցույցներ, թոքաբորբերի և տոնզիլիտների վարման մեթոդական ձեռնարկներն ու ուղեցույցները, այլ թեմաներով ուղեցույցներ: Անցկացվող ուսուցողական միջոցառումների շրջանակներում մանկական բժիշկները իրազեկվում են նոր մոտեցումների, տարբեր թեմաներով կլինիկական ուղեցույցների և հանձնարարականների վերաբերյալ:

✓ Մանկաբուժական լրատու

Լրատուն ամփոփում էր մանկական հիվանդությունների ախտորոշման և վարման նորագույն, ապացուցողական հենքի վրա հիմնված մոտեցումները: Յուրաքանչյուր թեմայի վերջում ներկայացված է թեստ՝ գիտելիքները ստուգելու նպատակով:
Հրատարակվել է Ուորլդ Վիժն Հայաստան կազմակերպության աջակցությամբ՝ 2008-2017թթ.-ին: Լրատուի բոլոր համարները հասանելի են այս հղումով:

✓ Արտագնա սեմինարներ և հիվանդ երեխաների խորհրդատվություններ

Ասոցիացիան կանոնավոր իրականացնում է արտագնա դասախոսություններ և սեմինարներ ԱԱՊ օղակի բժիշկների և մանկական մասնագետների համար բոլոր մարզերում: Հաշվի առնելով Հայաստանի մարզերում մասնագիտացված օգնություն ստանալու առկա դժվարությունները՝ Ասոցիացիան կազմակերպում է մասնագիտական խմբերի այցելություններ Հայաստանի մարզեր: Անցած տարիների ընթացքում զննվել է հարյուրավոր երեխա: 2009, 2012, 2014, 2015թթ.-ին Ասոցիացիայի նախաձեռնությամբ ԼՂՀ-ում անցկացվեցին ուսումնագործնական կոնֆերանսներ, վարպետության

դասընթացներ և «բաց դռների» օրեր, որոնց շրջանակներում տարբեր մասնագետների կողմից խորհրդատվություն են ստացել հարյուրավոր երեխաներ:

- ✓ **Գիտական աշխատանքների, վերլուծությունների, ուսումնասիրությունների խրախուսում**

Ասոցիացիան կանոնավոր մասնակցում է մանկաբուժության ոլորտում ընթացող և պլանավորվող գիտական աշխատանքերի քննարկումներին:

- ✓ **Աջակցություն քաղաքականության մշակմանը և հանրային առողջապահական ծրագրեր**

2010 և 2011թթ.-ին Ուորլդ Վիժն Հայաստանի «Երեխայի առողջությունն առաջնային է» քարոզարշավի շրջանակներում ՄԲՀԱ և «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ-ի կողմից իրականացվել է մարզերում նորածիններին և երեխաներին տրամադրվող բուժօգնության որակի և մատչելիությանը նպաստող խնդիրների բացահայտմանն, մարդկային ներուժի գնահատմանն ուղղված ուսումնասիրություն՝ մարզային բժիշկների, ադմինիստրատիվ օղակի և ՀԿ-ների ներգրավմամբ:

2012-2013թթ.-ին Ուորլդ Վիժն Հայաստան կազմակերպության աջակցությամբ «Բարձրացնել մասնագետների դերը և երեխաներին ցուցաբերվող մանկաբուժական ծառայությունների որակը» ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանում երեխաների առողջության արդիական խնդիրների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում, Լոռվա և Շիրակի մարզերում կազմակերպվել են կլոր սեղան-քննարկումներ՝ ՀՀ ԱՆ, Երևանի և մարզերի առաջատար կլինիկաների մասնագետների և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ: Քննարկվել են ոլորտի ներկայիս խնդիրները և Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի դերը մանկական բնակչության առողջությանն ուղղված քաղաքականության, ծրագրերի, չափորոշիչների և ուղեցույցների մշակման գործում:

2015թ.-ից «Բաց հասարակություններ հիմնադրամի» աջակցությամբ ՄԲՀԱ իրականացնում է Հայաստանում **Մանկական պալիատիվ օգնության** (ՄՊՕ) ներդրման աշխատանքներ: 2015թ.-ին իրականացվել է կարիքների գնահատում, «Երեխաների պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման» հայեցակարգի մշակում և քննարկում Կլոր սեղանին 2016թ.-ի: 2017թ.-ին իրականացվել է ուսուցողական նյութերի մշակում և ՄՊՕ սեմինարներ առողջապահական և սոցիալական խնամքի հաստատությունների անձնակազմերի համար:

2019թ.-ին Նեոնատալ բժշկության հայկական ասոցիացիայի և Հայկական ակնաբուժության նախագիծ կազմակերպության հետ համագործակցությամբ, ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ, իրականացվեցին գործողություններ՝ ուղղված **Պերինատալ պալիատիվ օգնության** մոտեցումների ներմուծմանը, հղիներին և նորածիններին տրամադրվող օգնության և կյանքի որակի բարելավման հարցերին: Մշակվեց «Պերինատալ պալիատիվ օգնության հիմունքները» ուսումնական նյութ՝ ներգրավված մասնագետների համար, անցկացվեցին 2-օրյա սեմինարներ՝ Երևանի մասնագիտացված բուժհիմնարկների անձնակազմի համար, կազմակերպվեց աշխատանքային կլոր սեղան-քննարկում՝ նվիրված մանկական և պերինատալ պալիատիվ օգնության հարցերին, որի շրջանակներում ներկայացվեցին իրականացված գնահատման արդյունքները, կարիքները և խնդիրները: Ոլորտի փորձագետների և քաղաքականություն մշակողների հետ քննարկվեցին մանկական և պերինատալ ծառայությունների ներդրման հեռանկարները:

2019-2020թթ.-ին պատրաստվեց առաջին հայալեզու տեսաֆիլմ՝ նվիրված ՄՊՕ հիմնախնդիրներին և կարիքներին, նաև հատուկ հեռուստահաղորդում, իրազեկման նյութերը տարածվեցին սոց.ցանցերում:
ՄԲՀԱ մասնակցեց ՄՊՕ ոլորտի մի շարք փաստաթղթերի մշակման և ներդրման աշխատանքներին:

2024թ.-ին ՀՀ ԱՆ և Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ հետ համատեղ մշակվեց Մանկական պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային պիլոտային շարժական (մոբիլ) ծառայության կազմակերպման և իրականացման կարգը, բուժառուների ընտրության չափանիշները: Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի աջակցությամբ անցկացվեցին հանդիպումներ և սեմինարներ պիլոտային ծառայության համար բուժառուների հավաքագրման նպատակով՝ Երևանի և հարակից տարածաշրջանների ԱԱՊ օղակի բուժհաստատությունների և սոցիալական խնամքի հաստատությունների անձնակազմի համար:
Պիլոտային արտագնա մանկական պալիատիվ ծառայությունը գործելու է Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնին կից, 2025թ.-ից:

2018թ.-ին Ամերիկյան մանկաբուժության ակադեմիայի (AAP) քրոնիկ ոչ տարափոխիկ հիվանդությունների կանխարգելում մանկական հասակում (NCD Child) բաժնի հետ համագործակցությամբ իրականացվեց ծրագիր՝ ուղղված **մանկաբույժների, դպրոցականների և դեռահասների շրջանում իրազեկության բարձրացմանը՝ առողջ**

ապրելակերպի խթանման և քրոնիկ հիվանդությունների կանխարգելման հարցերի շուրջ:

Ասոցիացիայի խորհրդի 2 անդամներ հանդիսանում են ՀՀ Առողջապահության նախարարին կից գործող հանրային խորհրդի անդամներ, ՄԲՀԱ փոխնախագահը՝ Հայկական բժշկական ասոցիացիայի խորհրդի անդամ է:

✓ Միջազգային գործունեություն և ծրագրեր

2010թ.-ին Վրաստանի Ռեսպիրատոր Ասոցիացիայի հրավերով Ջավախքի շրջանում անցկացվեց համատեղ գիտապրակտիկ կոնֆերանս և երեխաների ընդունելություն, զննվեց շուրջ 100 երեխա:
Յուրաքանչյուր տարի միջազգային մասնագիտական ասոցիացիաների, Ցյուրիխի Մանկական համալսարանական հիվանդանոցի և արտերկրյա այլ գործընկերների, առաջատար մանկական կլինիկաների հետ համատեղ անցկացվում են տարբեր կրթական միջոցառումներ:

2021թ.-ին ԱՄՆ գործընկերներ կազմակերպության աջակցությամբ «Երեխաների և դեռահասների առողջական վիճակի և սոցիալիզացիայի բարելավում կազմակերպված թիմային սպորտի խթանման միջոցով» ծրագրի շրջանակում իրականացվեց ՀՀ-ում դպրոցականների շրջանում ֆիզկուլտուրայի և թիմային սպորտի հետ կապված իրավիճակի վերլուծություն, թիմային սպորտի խթանման նպատակով պիլոտային վայրերում ծրագրի համար առաջարկների ներկայացում:

2021թ.-ից Հայկական ակնաբուժության նախագծի և Լոս Անջելեսի մանկական հիվանդանոցի (CHLA) հետ համագործակցությամբ նախաձեռնվեց հայ մանկաբույժների և ընտանեկան բժիշկների համար **առցանց շարունակական մանկաբուժական կրթության ծրագիրը** (https://learnwithopen.org/): Ծրագրի շրջանակներում հայ և ամերիկացի առաջատար մանկական բժիշկների կողմից մշակվում են մանկաբուժության արդիական թեմաներով առցանց ուսուցողական դասընթացների նյութեր, փոդքասթեր, մանկաբուժական նորություններ արծարծող տեղեկագրեր (OPEN-ը մեկ որպեում): Մասնակցելով նշված կթական միջոցառումներին՝ մանկական և ընտանեկան բժիշկները ստանում են նորագույն ապացուցահեն բժշկագիտական տեղեկատվություն և ձեռք են բերում ինքնակրթության ՇՄԶ կրեդիտներ:
2024թ.-ի դրությամբ հարթակում հրապարակված է շուրջ 44 կրեդիտավորված կրթական նյութեր՝ մանկաբուժության ոլորտում, այդ թվում մոդուլային և ելույթի դասընթացներ, փոդքաստեր, ինչպես նաև հոգեկան առողջությանն ու այլ ոլորտներին նվիրված կրթական նյութեր:





Սկսած 2007թ.-ից Ասոցիացիան կանոնավոր մասնակցում է Եվրոպական մանկաբուժական ասոցիացիայի, Մանկաբուժական միությունների Եվրոպական ակադեմիայի, ինչպես նաև Համաշխարհային մանկաբուժական ասոցիացիայի աշխատանքներին՝ որպես լիիրավ անդամ: Ասոցիացիայի ներկայացուցիչները մասնակցում են Միջազգային և Եվրոպական Գլխավոր ասամբլեաների աշխատանքներին, ընդհանուր քաղաքանության մշակմանը, ընտրություններին, Եվրոպական ասոցիացիայի կողմից իրագործվող միջազգային ուսումնասիրություններին:

✓ Մեր գործընկերները

ՄԲՀԱ գործունեությանը աջակցում են մի շարք տեղական և միջազգային կազմակերպություններ, ներառյալ «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ, ՀՀ առաջատար մանկական բուժհաստատություններ, Երևանի Մ.Հերացու անվ. պետական բժշկական համալսարան, Ցյուրիխի համալսարանական մանկական հիվանդանոցը, Լոս Անջելեսի մանկական հիվանդանոցը, Հայկական ակնաբուժության նախագիծ հիմնադրամը, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը, այլ գործընկերներ:

✓ Կոնտակտներ

Ասոցիացիայի նախագահ՝ պրոֆեսոր Աշոտ Ալեքսանդրի Սարգսյան
Փոխնախագահներ՝ դոցենտ Սերգեյ Սարգսյան, դոցենտ Նիկոլայ Դալլաքյան, պրոֆեսոր Նունե Բաղդասարյան, դոցենտ Լյուդմիլա Սիմոնյանց:
Տնօրեն՝ Եվա Մովսեսյան:
Քարտուղար՝ Նաիրա Շահվերդյան:

Հասցե՝
Մամիկոնյանց փ. 30, ք.Երևան, 0014
Հեռ.՝+374 10 236030; Fax: +374 10 284170
Էլ.փոստ՝ armpa@yandex.com
FB խումբ՝ https://www.facebook.com/groups/444730073208241